ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

2003
ԹԻՎ 2 (54)
ՓԵՏՐՎԱՐ
ԹՈՂԱՐԿՄԱՆ 10-ՐԴ ՏԱՐԻ

տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները «Արմենիան քարդ» ՓԲԸ-ին քարտային վճարումների պրոցեսինգի իրականացման, որոշ ՍՊԸ-ների արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիաներ տրամադրելու, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն և «Արֆին» վարկային միություն ՍՊԸ-ն գրանցելու և լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ, ինչպես և «Գևորգ Հակոբյան» արտարժույթի փոխանակման կետին և «ՄԳՍ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 70 որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի հաշվետվությունը 2002 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատելու մասին» 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 402-Ն որոշումը «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը և «Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը» հաստատելու մասին» 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 440-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի փետրվարի 19-ի թիվ 49 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 16

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 05-Ն որոշումը «Չերնոգորիայի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին» ..16

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 06-Ն որոշումը «Նաուրուի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին» ..17

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 10-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ..17

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/35Ա և 1/63 որոշումները Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակին նվիրված արծաթե և Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ոսկե և արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու վերաբերյալ ..18

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ..20

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԸՆԴՈՒՆԵԼ

- «Արմենիան քարդ» փակ բաժնետիրական ընկերությանը քարտային վճարումների պրոցեսինգի իրականացման ***լիցենզիա տրամադրելու մասին*** (որոշում թիվ 59):

- «Կամո և եղբայրներ», «Արման Բաղդասարյան» և «Կանգոռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին արտարժույթի առք ու վաճառքի ***լիցենզիա տրամադրելու մասին*** (որոշումներ թիվ 64, 90, 91):

- «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը ***գրանցելու*** (որոշում թիվ 76) և բանկային գործունեության ***լիցենզիա տրամադրելու մասին*** (որոշում թիվ 100):

- «Արֆին» վարկային միություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ***գրանցելու և լիցենզավորելու մասին*** (որոշում թիվ 87):

- «Գևորգ Հակոբյան» արտարժույթի փոխանակման կետին և «ՄԳՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու ***լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին*** (որոշումներ թիվ 77, 95):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով 2003 թվականի փետրվարի 7-ին ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 12 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 26 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 6 %*** (որոշում թիվ 54), իսկ փետրվարի 21-ին ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 10 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 20 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 5 %*** (որոշում թիվ 75):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի հաշվետվությունը 2002 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, ղեկավարվելով նույն օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի հաշվետվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
17 փետրվարի 2003 թ., N 70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը և «Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը» հաստատելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետը, 42-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 1-ին մասը, 39-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժէ» ենթակետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 13-ի ««Բանկերի սնանկացման ընթացակարգի մասին» կանոնակարգ 7-ը հաստատելու վերաբերյալ» թիվ 7 որոշումը:

4. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ բանկերի ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դիմումի հիման վրա բանկի լուծարային կառավարիչ նշանակելու դեպքում ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 7 որոշմամբ հաստատված «Բանկերի սնանկացման ընթացակարգի մասին» կանոնակարգ 7-ով խնամակալի համար սահմանված որակավորման չափանիշներին:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությանը՝ եռամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը ներկայացնել՝

ա) անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների գնահատման հատուկ կարգի նախագիծ,

բ) անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի, հասույթների, պարտավորությունների կազմի, չափերի և ֆինանսական ծրագրում սահմանված ծրագրային ցուցանիշներին հասնելու կանխատեսումների վերաբերյալ հաշվետվության ձև:

6. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի աշխատակազմին՝

ա) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգ 7-ի անգլերեն և ռուսերեն պաշտոնական թարգմանությունն ու հրատարակումը,

բ) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգ 7-ի ենթահավելված 1-ում տրված՝ բանկի և վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականի ձևի տպագրումը՝ 50 օրինակից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
26 դեկտեմբերի 2002 թ., N 402-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2002 թ. դեկտեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.02.03 թ. (ՀՀԳՏ N5, 3.02.03):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 402-Ն որոշմամբ

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի (այսուհետև՝ ադմինիստրացիա) ձևավորման կարգն ու պայմանները, ադմինիստրացիայի ղեկավարի թեկնածուին ներկայացվող պահանջները, սահմանափակումները, ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականների տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման ընթացակարգը կարգավորվում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, սույն կանոնակարգով, անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) այլ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԲԱՆԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՉԱՓԸ, ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) 2 (երկու) միավորից ցածր լինելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված անվճարունակության հիմքով:

4. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում 3 (երեք) անգամ խախտելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով սահմանված անվճարունակության հիմքով:

5. Վարկային կազմակերպությունը ճանաչվում է անվճարունակ, եթե առկա է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կամ «բ» կետերով սահմանված անվճարունակության հիմքերից որևիցե մեկը:

ԳԼՈՒԽ III. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անվճարունակության հիմքերից որևիցե մեկը բացահայտելու, ինչպես նաև սույն կանոնակարգի 10-րդ կետում նշված պայմաններից մեկի կամ մի քանիսի առկայության դեպքում Կենտրոնական բանկը եռօրյա ժամկետում նշանակում է ադմինիստրացիայի ղեկավար, որը տասնմեկօրյա ժամկետում ձևավորում է երեք հոգուց բաղկացած ադմինիստրացիա, եթե Կենտրոնական բանկի իրավական ակտով ադմինիստրացիայի անդամների այլ թվաքանակ սահմանված չէ:

7. Կենտրոնական բանկի կողմից ադմինիստրացիայի ղեկավարի նշանակման պահից ադմինիստրացիայի ղեկավարն իրականացնում է անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գնահատումը՝ անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների գնահատման հատուկ կարգին համապատասխան:

Ադմինիստրացիայի ղեկավարը անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գնահատման և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված խնդիրների իրագործման նպատակով կարող է իր կողմից իրականացվող աշխատանքներին ներգրավել (այդ թվում՝ Կենտրոնական բանկից) իրավաբաններ, աուդիտորներ, հաշվապահներ և այլ մասնագետներ:

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետում սահմանված գնահատման արդյունքում ադմինիստրացիայի ղեկավարը բանկի կամ վարկային կազմակերպության անվճարունակության հիմքերը բացահայտելու պահից երկշաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհրդին է ներկայացնում կարճ ժամանակահատվածում բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կապիտալի տեսքով ֆինանսական միջոցների ներգրավման, չաշխատող ակտիվների վերականգնման, ակտիվների մասնակի վաճառքի, ակտիվների և պարտավորությունների միաժամանակյա վաճառքի, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ գլխով սահմանված կարգով բանկի գործունեության տեսակի փոփոխման հնարավորության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բանկային և ֆինանսական համակարգերի վրա բանկի կամ վարկային կազմակերպության լուծարման հնարավոր ազդեցության մասին եզրակացություն:

9. Գնահատման արդյունքների հիման վրա ադմինիստրացիայի ղեկավարը մշակում է անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը և այն ներկայացնում Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը՝ մինչև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտը:

10. Կենտրոնական բանկի խորհուրդը նշանակում է ադմինիստրացիա և հաստատում բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը, եթե՝

ա) ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացված եզրակացությամբ և ֆինանսական առողջացման ծրագրի նախագծով հիմնավորվում է բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման հնարավորությունը, և (կամ)

բ) բանկի կամ վարկային կազմակերպության լուծարմամբ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի՝ ամբողջությամբ վերցրած միասնականությունը և սահունությունը չի պահպանվի, և (կամ)

գ) ադմինիստրացիայի՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խնդիրների իրագործման միջոցով հնարավոր է առավելագույնս բավարարել բանկի կամ վարկային կազմակերպության պարտապանների պահանջները և (կամ) նվազագույնի հասցնել ավանդների երաշխավորման հիմնադրամի ծախսերը, և (կամ)

դ) հնարավոր է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ, 22-րդ կամ 23-րդ հոդվածներով սահմանված միջոցառման (միջոցառումների) իրականացման միջոցով ֆինանսապես առողջացնել բանկը կամ վարկային կազմակերպությունը: Ընդ որում, բանկի կամ վարկային կազմակերպության մասնակիցների և (կամ) այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները պետք է իրականացվեն բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից եռամսյա ժամկետում, կամ այդ ժամկետի ընթացքում պետք է բանկի կամ վարկային կազմակերպության մասնակիցների և (կամ) այլ անձանց և Կենտրոնական բանկի միջև ձեռք բերվի համաձայնություն՝ ֆինանսական օգնության և (կամ) լրացուցիչ միջոցների ներդրման մասին:

11. Ադմինիստրացիայի ղեկավարը Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում ադմինիստրացիայի և ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման մասին Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումների նախագծեր, կցելով նաև՝

ա) ադմինիստրացիայի անդամների թեկնածուների անձնական տվյալները,

բ) համապատասխան հիմնավորումներ՝ անձանց որպես ադմինիստրացիայի անդամների թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ,

գ) ֆինանսական առողջացման ծրագիրը,

դ) սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված եզրակացությունը:

Ընդ որում, անվճարունակ ճանաչված բանկը կարող է փոփոխել իր գործունեության տեսակը վարկային կազմակերպության բացառապես այն դեպքում, երբ կապիտալը և ֆինանսական այլ ցուցանիշները բավարարում են Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպություններին ներկայացվող պահանջներին:

ԳԼՈՒԽ IV. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Անվճարունակ բանկի ադմինիստրացիայի ղեկավարը մինչև յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ աշխատանքային օրվա վերջը Կենտրոնական բանկ է ներկայացնում նախորդ շաբաթվա սառեցված պարտավորությունների և արտարժութային դիրքերի վերաբերյալ հաշվետվությունները, անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ծախսերի, հասույթների, պարտավորությունների կազմի, չափերի և ֆինանսական ծրագրում սահմանված ծրագրային ցուցանիշներին հասնելու կանխատեսումների վերաբերյալ հաշվետվությունը: Բանկի կամ վարկային կազմակերպության ադմինիստրացիայի ղեկավարը Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, եթե Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կամ ֆինանսական առողջացման ծրագրով այլ հաշվետվական ձևեր, ներկայացման հաճախականություն, կարգ և պայմաններ սահմանված չեն:

ԳԼՈՒԽ V. ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

13. Անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվները սահմանվում են ֆինանսական առողջացման ծրագրով:

14. Հիմնական կամ հատուկ տնտեսական նորմատիվները խախտելու դեպքում անվճարունակ բանկը կամ վարկային կազմակերպությունը պատասխանատվություն է կրում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ գլխով և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ VI. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

15. Ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման ստուգումն իրականացնում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով):

16. Ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման ստուգման համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և լիցենզավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի աշխատել են որպես կազմակերպության ղեկավար, ղեկավարի տեղակալ կամ վարել են կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման ու ղեկավարման հետ կապված այլ պաշտոններ, կամ տնտեսագիտության կամ իրավագիտության բնագավառում կատարել են մասնագետի, գիտական աշխատողի աշխատանք:

ԳԼՈՒԽ VII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Մասնագիտական որակավորման ստուգմանը մասնակցելու համար դիմորդը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում՝ նշելով դիմողի ազգանունը, անունը, անձնագրի սերիան ու համարը, բնակության վայրն ու հեռախոսահամարը, դիմումին կից փաստաթղթերի ցանկը,

բ) աշխատանքային գրքույկի պատճենը կամ սույն կանոնակարգի 16-րդ կետում նշված պահանջները հավաստող համապատասխան փաստաթուղթ,

գ) կենսագրական տվյալներ,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված՝ անվճարունակ կազմակերպությունների անվճարունակության գործերով կառավարչի լիցենզիայի պատճենը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդագիրը (ներկայացվում է միայն այդ լիցենզիան ունեցող դիմորդների կողմից):

18. Դիմորդը իր ներկայացրած փաստաթղթերում տեղ գտած սխալների համար և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների համար կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ VIII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Սույն կանոնակարգի 17-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո, հանձնաժողովն իրականացնում է դիմորդի մասնագիտական որակավորման ստուգումը:

20. Մասնագիտական որակավորման ստուգման նպատակով դիմորդը (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 21-րդ կետով նախատեսված դիմորդների) պատասխանում է տեստային հարցերին: Տեստային հարցաշարը բաղկացած է 70 հարցից, որոնցից 30-ը իրավաբանական, իսկ 40-ը տնտեսագիտական ոլորտին վերաբերող հարցեր են: Տեստային հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է մեկ բալ: Մասնագիտական որակավորման ստուգումն անցկացվում է համակարգչի միջոցով, ընդ որում, տեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

21. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված՝ անվճարունակ կազմակերպությունների անվճարունակության գործերով կառավարչի լիցենզիա և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդագիր ունեցող հավակնորդներին տրվում է բանկի և վարկային կազմակեպության ադմինիստրացիայի ղեկավարի պաշտոնում աշխատելու համար որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայական՝ հանձնաժողովի նիստում անցկացված հարցազրույցի հիման վրա:

22. Մասնագիտական որակավորման ստուգման տեստային հարցաշարի կազմմանը վերաբերող հարցերը և թեմաները ենթակա են «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» պարտադիր հրապարակման՝ ստուգման օրվանից ոչ ուշ, քան 1 ամիս առաջ:

23. Մասնագիտական որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի և տեղի մասին դիմորդին պատշաճ ձևով տեղեկացվում է նշված ստուգման անցկացումից առնվազն յոթ օր առաջ:

24. Դիմորդը համարվում է մասնագիտական որակավորման ստուգումն անցած, եթե նա առնվազն 65 տեստային հարցերի պատասխանել է ճիշտ:

25. Դիմորդին պատշաճ ձևով տեղեկացվում է մասնագիտական որակավորման ստուգման արդյունքների մասին՝ դրա անցկացումից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում: Դիմորդին արդյունքների վերաբերյալ սույն կետով սահմանված ժամկետում չտեղեկացնելու դեպքում դիմորդը համարվում է որակավորված:

26. Մասնագիտական որակավորման ստուգմանը մասնակցությունը մերժվում է, եթե՝

ա) դիմորդի ներկայացրած փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ,

բ) ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,

գ) դիմորդն իրավունք չունի զբաղվել հայցվող գործունեության տեսակով,

դ) դիմորդի տվյալները չեն բավարարում սույն կարգի 16-րդ կետի պահանջներին:

ԳԼՈՒԽ IX. ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

27. Մասնագիտական որակավորման ստուգման արդյունքը սույն կանոնակարգի 24-րդ կետի պահանջին համապատասխանելու դեպքում դիմորդին տրվում է մասնագիտական որակավորման վկայական՝ ձևը ըստ ենթահավելված 1-ի: Մասնագիտական որակավորման վկայականը տրվում է 3 (երեք) տարի ժամկետով:

Հավելված 2
«Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը» հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 402-Ն որոշմամբ

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ I. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը « _____ » թվականի « _____ » հաստատելու մասին թիվ « _____ » որոշմամբ « _____ » բանկում (կամ վարկային կազմակերպությունում) (այսուհետև՝ բանկ) նշանակել է ժամանակավոր ադմինիստրացիա (այսուհետև՝ ադմինիստրացիա):

2. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի պահանջներին համապատասխան, սույն ծրագիրը նպատակ ունի ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ապահովել բանկի ֆինանսական կայունության և վճարունակության վերականգնումը, ինչպես նաև բանկի կամ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների առավելագույն բավարարումը:

3. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, սույն ծրագիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո ադմինիստրացիան գործում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան և կրում է նշված օրենքով ամրագրված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

4. Սույն ծրագրի գործողության ժամկետը սահմանվում է _____ (շաբաթ, ամիս, տարի), և նշված ժամկետի հաշվարկը սկսվում է սույն ծրագիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվելու պահից:

5. Բանկի ադմինիստրացիան իր գործունեությունն իրականացնում է սույն ծրագրի պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

6. Այս գլխում տրվում են՝

ա) բանկի ակտիվները, այդ թվում՝ դրամական միջոցները, պետական արժեթղթերը, զուտ վարկային ներդրումները, զուտ հաշվարկված տոկոսները, հիմնական միջոցները, այլ ակտիվներ: Նշվում են այն վարկային ներդրումները, որոնք ենթակա են դասակարգման՝ որպես անհուսալի, վարկային ներդրումների կառուցվածքը, խոշոր վարկերի մարման ժամկետները և ադմինիստրացիայի կողմից դրանց գնահատականները:

բ) Բանկի պարտավորությունները, այդ թվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց գծով, ռեզիդենտ իրավաբանական անձանց գծով, միջազգային ծրագրերի գծով, ռեզիդենտ բանկերի գծով և այլ պարտավորություններ:

գ) Առ _____ ամսաթիվը բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող դուրս գրված վարկերը, տոկոսները, դեբիտորական պարտքերը:

ԳԼՈՒԽ III. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆԸ

7. Բանկի մասնակիցների, այդ թվում՝ նոր մասնակիցների կողմից տրամադրվող միջոցները, կարող են ուղղվել բանկի կանոնադրական հիմնադրամի (կապիտալի) համալրմանը կամ այն ակտիվների վերականգնմանը, որոնց արժեզրկմամբ է պայմանավորված բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը: Ներդրման կոնկրետ եղանակը որոշում է ադմինիստրացիան՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ: Այլ անձանց մասնակցության եղանակները բանկի ֆինանսական վիճակի վերականգնման հարցում որոշում է ադմինիստրացիայի ղեկավարը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

8. Ըստ անհրաժեշտության, հաշվի առնելով կոնկրետ բանկի առանձնահատկությունները, նշվում են ներդրողները, նրանց հետ կնքվելիք գործարքի պայմանները, ընթացակարգը, ներդրման չափը, դրա արդյունքում ակնկալվող բանկի ֆինանսական վիճակի փոփոխությունները:

ԳԼՈՒԽ IV. ԲԱՆԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9. Ադմինիստրացիան պարտավոր է իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ վարչական ծախսերի կրճատման ուղղությամբ՝ դրանց ամսական սահմանաչափերը հասցնելով հետևյալ մեծություններին.

(հազ. դրամ)

1	Աշխատավարձի և դրա գծով հաշվարկված հարկերի և պարտադիր այլ վճարների ծախսեր	
2	Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին	
3	Գործուղման ծախսեր	
4	Կապի և հաղորդակցման ծախսեր	
5	Պահպանության ծախսեր	
6	Կոմունալ ծախսեր	
7	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	
8	Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման ծախսեր	
9	Այլ ծախսեր	
	Ընդամենը	

10. Ֆինանսական առողջացման ծրագրով կարող է սահմանվել, սույն գլխով նախատեսված ծախսային հոդվածներում խնայողություններ ունենալու դեպքում, այդ խնայողությունների օգտագործման կարգը, ուղղությունները:

11. Բանկը իրավունք ունի դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների կողմից աճուրդային կարգով վաճառվող գույքը գնել՝ գործարքի պայմանները նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

ԳԼՈՒԽ V. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

12. Սույն ծրագրի գործողության ընթացքում նախատեսվում է օտարել բանկի սեփականություն հանդիսացող գույքը՝ ըստ անհրաժեշտության, ընդ որում, առաջնահերթ պետք է վաճառվի այն գույքը, որը ուղղակիորեն կապված չէ բանկի գործունեության հետ:

13. Կարող է կցվել այն գույքի ցանկը, որը պարտադիր ենթակա է օտարման կամ հանձնարարական տալ ադմինիստրացիայի ղեկավարին՝ որոշակի ժամկետում ներկայացնել վաճառքի ենթական գույքի ցանկը, որը կհաստատվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ որպես ֆինանսական առողջացման ծրագրի անբաժանելի մաս:

14. Գույքի իրացումը պետք է իրականացվի երկու տարբերակով.

ա) ուղղակի վաճառք,

բ) հիմնական միջոցների զիջում (փոխանցում) պարտատերերին՝ բանկի նկատմամբ վերջիններիս պահանջների դիմաց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով:

ԳԼՈՒԽ VI. ՏԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

15. Նշվում են ադմինիստրացիայի իրավունքները ակտիվների որակի բարելավման և միջոցների ավելի հեշտ հավաքագրման ու պարտավորությունների ավելի արագ կատարման նպատակով պահանջի իրավունքի զիջման և պարտքի փոխանցման գործարքներ կնքելու վերաբերյալ, ինչպես նաև այդ գործարքների ուղղությունները, հետևյալ ձևերով՝

ա) վարկային պայմանագրերից և այլ պահանջներից բխող իրավունքների ուղղակի վաճառք՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով,

բ) իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունների դիմաց բանկի վարկային պայմանագրերից և այլ գործարքներից բխող պահանջի իրավունքների զիջում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով,

գ) օրենքով սահմանված կարգով իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց նկատմամբ ունեցած ցպահանջ և ժամկետային պարտավորությունների փոխանցում այլ անձանց: Ընդ որում, եթե պարտքի փոխանցումը կատարվում է բանկի վարկային պայմանագրերից և այլ պահանջներից բխող իրավունքներից (ակտիվներից) բավարարում ստանալու պայմանով, ապա նման գործարքի պայմանները ևս նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

ԳԼՈՒԽ VII. ԲԱՆԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

16. Ադմինիստրացիայի գործունեության և սույն ծրագրի գործողության ընթացքում բանկի կառավարման բոլոր մարմինների լիազորությունները կասեցվում են և ամբողջությամբ անցնում ադմինիստրացիայի ղեկավարին: Բանկի ադմինիստրացիան ողջ ծավալով իրականացնում է բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և բանկի կանոնադրությամբ նախատեսված լիազորությունները սույն ծրագրի լիարժեք իրականացման համար:

17. Բանկի ադմինիստրացիայի անդամները, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները գործում են ադմինիստրացիայի ղեկավարի հանձնարարականների հիման վրա:

18. Բանկը գործում է սույն ծրագրով հաստատված կազմակերպական կառուցվածքի հիման վրա (կցվում է կազմակերպական կառուցվածքը):

19. Այս գլխում կարող են նշվել նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ադմինիստրացիայի ղեկավարի կառավարչական (ադմինիստրատիվ) գործառույթների բաշխման կարգը ադմինիստրացիա-

յի անդամների միջև՝ սահմանելով ադմինիստրացիայի անդամներից յուրաքանչյուրի կառավարման ոլորտները, դրանց հետ կապված լիազորությունները, իրավունքները, պարտականությունները: Սույն կետով նախատեսվածի վերաբերյալ ֆինանսական առողջացման ծրագրում չնշելու դեպքում ադմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ադմինիստրացիայի անդամների միջև լիազորությունների բաշխման վերաբերյալ որոշում է կայացնում:

20. Ելնելով բանկի ֆինանսական առողջացման անհրաժեշտությունից՝ բանկի կազմակերպական կառուցվածքը կարող է փոփոխվել հետևյալ ձևերով՝

ա) բանկի աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխությամբ,

բ) բանկի կառուցվածքի փոփոխությամբ,

գ) բանկի տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանումների լուծարմամբ:

ԳԼՈՒԽ VIII. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ, ԱՅԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

21. Սույն ծրագրի հաստատման պահից բանկը դուրս է գալիս «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տնտեսական նորմատիվների կարգավորման դաշտից և գործում է ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված նորմատիվների կարգավորման դաշտում:

ԳԼՈՒԽ IX. ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

22. Ծրագրի հաստատումից հետո ադմինիստրացիան _____ օրվա ընթացքում հաշվարկում է սույն ծրագրի հաստատման օրվա դրությամբ բանկի հաշվեկշռում, ինչպես նաև արտահաշվեկշռում արտացոլված կամ բանկին ներկայացված հիմնավորված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

23. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պահանջների ցանկին համաձայնություն տալու դեպքում նշված ցանկով ամրագրված բանկի պարտավորությունները համարվում են լրիվ և սպառիչ, չեն կարող որևէ կերպ ավելացվել, բացառությամբ սույն ծրագրով նախատեսված դեպքերի:

24. Արգելվում է փոփոխել ցանկացած պայմանագրով տոկոսների, միջնորդավճարների և այլ փոխհատուցումների չափը, եթե նման փոփոխությունները ավելացնում են բանկի ծախսերը կամ պարտավորությունները, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թույլատրվող դեպքերի:

25. Ադմինիստրացիան իրավունք ունի կատարել հակընդդեմ պարտավորությունների հաշվանցներ, ցանկացած ներբանկային վճարումներ՝ սույն ծրագրով նախատեսված դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով:

26. Իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները կատարելիս հիմք են ընդունվում ժամկետների վերաբերյալ գործարքի պայմանները, այդ թվում՝ սույն ծրագրի հաստատումից հետո ձեռք բերված համաձայնությունների մասով:

27. Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետանց պարտավորությունների կատարումը ըստ պարտատերերի առանձին խմբերի և գումարների թույլատրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, որով և վերացվում է այդ պարտավորությունների կատարման նկատմամբ սահմանված մորատորիումը:

28. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է թույլատրվել պարտատերերի առանձին խմբերի գծով տոկոսների հաշվարկումը և վճարումը՝ նույն որոշմամբ սահմանված պայմաններով:

29. Բանկում ադմինիստրացիա նշանակելուց հետո բանկի հաշվեկշռում արտացոլված ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում՝ բանկի հետ կապված) օգտին երրորդ անձանց կողմից կատարվող վճարումներով պայմանավորված ցպահանջ պարտավորությունների աճի դեպքում բանկի թղթակցային հաշիվներին կամ դրամարկղ գումարների մուտքագրման դեպքում բանկը արտահերթ կերպով վճարում է բացառապես տվյալ անձի օգտին հաշվեգրված կամ տվյալ անձի հանձնարարությամբ վճարվող գումարը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձը չմարված պարտավորություն ունի բանկի նկատմամբ: Սույն պահանջը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ բանկը օրենքով սահմանված կարգով հանդիսանում է միջնորդ բանկ: Նշված միջոցների հաշվին չի թույլատրվում կատարել նաև սույն ծրագրով թույլատրվող ծախսերը:

30. Բանկն իրավունք չունի վարկեր, փոխառություններ կամ կանխավճարներ (բացառությամբ՝ սույն ծրագրով սահմանված ծախսերի սահմանաչափերի) տալ, բանկային երաշխիքներ և երաշխավորություն-

ներ տրամադրել, գրավադրել բանկի միջոցները կամ այլ կերպ ստանձնել լրացուցիչ պարտավորություններ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թույլատրվող դեպքերի:

31. Բանկը միջոցներ կարող է ներգրավել միայն սույն ծրագրի հաստատումից հետո՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով:

32. Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները (հաշիվները) միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ (բանկային հաշվի պայմանագրից բխող մեկ պարտավորություն), այդ թվում՝ մինչև _____ թվականը հաշվարկված տոկոսները:

ԳԼՈՒԽ X. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Սույն գլխում ներառվում են բանկի բաժնեմասերի օտարման պայմանների, բանկի կանոնադրական կապիտալի ավելացման մասին դրույթներ:

34. Սահմանվում է ադմինիստրացիայի պարտականությունը՝ ներկայացնել օրենքներով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված բոլոր հաշվետվությունները: Բացի այդ, սահմանվում է դրույթ այն մասին, որ ադմինիստրացիան պարտավոր է ամիսը մեկ ներկայացնել ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

Ձև 1 և ձև 2 հաշվետվությունները ներկայացվում են «Կանոնակարգ 7-ի» ենթահավելվածներ 2-ով և 3-ով սահմանված ձևերով:

35. Սույն գլխում սահմանվում են նաև բոլոր այն դրույթները, որոնք անհրաժեշտ են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանն ուղղված՝ ադմինիստրացիայի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործողությունների կարգավորմանը:

ենթահավելված 1

ՎԿԱՅԱԿԱՆ
բանկի և վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման
N 000000

Սույնով հավաստվում է, որ _____
(անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ)
անցել է բանկի և վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման ստուգում և համապատասխանում է բանկի և վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված մասնագիտական որակավորման պահանջներին:

Սույն վկայականը տրվել է _____ թվականին և ուժի մեջ է մինչև _____ թվականը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝
_____
(անուն ազգանուն)
_____
(ստորագրություն)

Կ. Տ.

Ենթահավելված 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձև 1)

անվճարունակ բանկի սառեցված պարտավորությունների վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____

(հազ. դրամ)

Համար	Հաշվեկշռային հաշիվ	Հայաստանի Հանրապետության դրամով	Արտարժույթով
3127	Ոչ ռեզիդենտ բանկերից ներգրաված ժամկետային ավանդներ		
3141	Ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր		
3143	Ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր		
3145	Ռեզիդենտ բանկերի տրամադրած օվերդրաֆտներ		
3147	Ոչ ռեզիդենտ բանկերի տրամադրած օվերդրաֆտներ		
3211	Ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3213	Ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3215	Ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ժամկետային ավանդներ		
3217	Ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ժամկետային ավանդներ		
3231	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր		
3233	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր		
3235	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր		
3261	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ պետական իրավաբանական անձանց հետ		
3262	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ ոչ պետական իրավաբանական անձանց հետ		
3263	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ		
3265	Ռեպո համաձայնագրեր ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հետ		
3267	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ հիմնարկների հետ		
3269	Ռեպո համաձայնագրեր ոչ ռեզիդենտ հիմնարկների հետ		
3271	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ		
3272	Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտների հետ		
3274	Ռեպո համաձայնագրեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ		
3275	Ռեպո համաձայնագրեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտների հետ		
3311	Ռեզիդենտ պետական իրավաբանական անձանց հաշիվներ		
3312	Ռեզիդենտ ոչ պետական իրավաբանական անձանց հաշիվներ		
3313	Ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց հաշիվներ		
3315	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հաշիվներ		
3317	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հաշիվներ		
3319	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հաշիվներ		
3321	Ռեզիդենտ հիմնարկների հաշիվներ		
3323	Ոչ ռեզիդենտ հիմնարկների հաշիվներ		
3331	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3333	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3335	Ռեզիդենտ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3336	Ռեզիդենտ ոչ պետական իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3337	Ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3339	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3340	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսներ		
3341	Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3343	Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ ավանդներ		
3351	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդներ		
3352	Ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերից ներգրաված ժամկետային ավանդներ		
3354	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդներ		
3355	Ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերից ներգրաված ժամկետային ավանդներ		
3357	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսներ		
3358	Ռեզիդենտ պետական իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային ավանդներ		
3359	Ռեզիդենտ ոչ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային ավանդներ		

3361	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային ավանդներ		
3363	Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային ավանդներ		
3365	Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային ավանդներ		
3411	Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվներ		
3431	Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ		
3511	Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ		
3521	Բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր		
3522	Բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս		
3531	Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր		
3532	Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս		
3551	Թողարկված այլ արժեթղթեր		

Բանկի ադմինիստրացիայի ղեկավար՝ _____

_____

Գլխավոր հաշվապահ՝ _____

_____

Կ.Տ.

Ենթահավելված 3

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
անվճարունակ բանկի արտարժութային դիրքերի վերաբերյալ (ձև 2)

Բանկի անվանումը

_____

« __ » « _____ » « ____ » թվից մինչև

« __ » « _____ » « ____ » թիվը

	Համախառն արտարժութային դիրք	Արտարժութային դիրքի մեծությունը օրվա վերջին	
		1-ին խումբ արտարժութային դիրք	2-րդ խումբ արտարժութային դիրք
1	*2*	*3*	*4*
երկուշաբթի	0		
երեքշաբթի	0		
չորեքշաբթի	0		
հինգշաբթի	0		
ուրբաթ	0		
շաբաթ	0		
կիրակի	0		

Բանկի ադմինիստրացիայի ղեկավար՝ _____

_____

Գլխավոր հաշվապահ՝ _____

_____

Կ.Տ.

1. Այն դեպքում, երբ արտարժութային պարտավորությունները գերազանցում են ակտիվները («կարճ» դիրք), 3 և 4 սյուներում նշված մեծությունները տրվում են բացասական նշանով:
2. Սույն հաշվետվության 3 և 4 սյուները լրացվում են «ԿԲ կանոնակարգ 2-ով» սահմանված արտարժույթների խմբերով՝ որպես ակտիվների և պարտավորությունների (չեն ներառվում սառեցված պարտավորությունները) տարբերություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի փետրվարի 19-ի թիվ 49 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի փետրվարի 19-ի թիվ 49 որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետև՝ կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. կանոնակարգի 12-րդ կանոնի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) սեփականության իրավունքով իրեն (իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր բանկին) պատկանող, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք՝ կողպվող դռնով: Տարածքի վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 5 տարի, իսկ օդանավակայաններում գտնվող մասնաճյուղերի դեպքում՝ առնվազն 6 ամիս ժամկետով».

1.2. կանոնակարգի 19^1 կանոնի 4-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) սույն կանոնակարգի 12-րդ կանոնի «ա» ենթակետով նախատեսված տարածքի վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը կարող է սահմանվել առնվազն 1 տարի, իսկ օդանավակայաններում գտնվող մասնաճյուղերի դեպքում՝ առնվազն 6 ամիս ժամկետով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 դեկտեմբերի 2002 թ., N 440-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

Չերնոգորիայի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին արգելել Չերնոգորիայի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում բացել թղթակցային և այլ հաշիվներ:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին արգելել Չերնոգորիայի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերի կամ այլ ֆինանսավարկային կազմակերպությունների համար Հայաստանի Հանրապետությունում բացել թղթակցային և այլ հաշիվներ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
16 հունվարի 2003 թ., N 05-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակությունում:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2002 թ. դեկտեմբերի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.02.03 թ. (ՀՀԳՏ N5, 3.02.03):

** *Ոչ պաշտոնական հրատարակությունում:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. հունվարի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.02.03 թ. (ՀՀԳՏ N5, 3.02.03):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Նաուրուի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին արգելել Նաուրուի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ այլ ֆինանսավարկային կազմակերպություններում բացել թղթակցային և այլ հաշիվներ:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին արգելել Նաուրուի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերի կամ այլ ֆինանսավարկային կազմակերպությունների համար Հայաստանի Հանրապետությունում բացել թղթակցային և այլ հաշիվներ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
16 հունվարի 2003 թ., N 06-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, քննարկելով Համաշխարհային բանկի Հայաստանի ֆինանսական հատվածի տեխնիկական օգնության առաքելության 2002 թվականի դեկտեմբեր ամսվա օգնության հուշագիրն ու հաշվի առնելով Արժույթի միջազգային հիմնադրամի կարծիքը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 14-ում (այսուհետև՝ կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

ա) կանոնակարգի 2-րդ կետի «ա» ենթակետից հանել «իրենց մասնակիցներից» և «անհատ ձեռնարկատերերից» բառերը,

բ) կանոնակարգի 4-րդ կետի «ա» ենթակետից հանել «իրենց մասնակիցներից» և «անհատ ձեռնարկատերերից» բառերը,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. հունվարի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.02.03 թ. (ՀՀԳՏ N5, 3.02.03):

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. հունվարի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.02.03 թ. (ՀՀԳՏ N5, 3.02.03):

գ) կանոնակարգի 5-րդ կետի «ա» ենթակետից հանել «իրենց մասնակիցներից» և «անհատ ձեռնարկատերերից» բառերը,

դ) կանոնակարգի 2-րդ, 3-րդ կետերի «ժ» ենթակետերից և և 4-րդ կետի «ի» ենթակետից հանել «իրենց» բառերը,

ե) կանոնակարգի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «***Ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են իրավաբանական անձանցից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ***»:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
16 հունվարի 2003 թ., N 10-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԸՆԴՈՒՆԵԼ

- Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակին նվիրված արծաթե և Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ոսկե հուշադրամները սույն թվականի փետրվարի 10-ից ***շրջանառության մեջ դնելու վերաբերյալ*** (որոշում թիվ 1/35Ա):

- Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված արծաթե հուշադրամը սույն թվականի մարտի 3-ից ***շրջանառության մեջ դնելու վերաբերյալ*** (որոշում թիվ 1/63Ա):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Փետրվար 2003)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Տնտեսական աճ: 2003 թ. հունվար-փետրվարին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.5%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 3.8 տոկոսային կետ), արդյունաբերության (2.3) և շինարարության (1.0) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2003 թ. հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 3.6%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թ. փետրվարին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 1.5%-ով անկում՝ հիմնականում «Ձու», «Միրգ» ու «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի, համապատասխանաբար՝ 19.7%, 14.0% և 2.7%-ով անկման հաշվին:

2002 թ. դեկտեմբերի համեմատ գների ընդհանուր մակարդակի աճը կազմել է 2.5%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 2.81 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.01 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -0.29 տոկոսային կետը: Բնականոն սղաճի բացասական մակարդակը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ձու» և «Ձկնամթերք» ապրանքախմբերը, որոնք պատճառ են դարձել փետրվար ամսվա գների անկման զգալի մասի, ընդգրկված են բնականոն սղաճի հաշվարկում:

2003 թ. հունվար-փետրվարին, 2002 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.4%, իսկ փետրվարին, 2002 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 103.0%:

Արտաքին հատված: 2003 թ. հունվար - փետրվարին ապրանքների արտահանման ծավալը (FOB գներով) կազմել է 85.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 11.1%-ով: Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի 12.0% աճով:

Ապրանքների ներմուծման ծավալը (CIF գներով) կազմել է 168.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 27.1%-ով: Ընդ որում, այստեղ նույնպես աճը հիմնականում պայմանավորված է եղել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալի 84.7% աճով:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի, արտահանումն աճել է 10%-ով, իսկ ներմուծումը՝ 13.8%-ով:

Արդյունքում, 2003թ. հունվար - փետրվար ամիսներին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 49.1%-ով և կազմել 83.0 մլն ԱՄՆ դոլար:

2003 թ. հունվար – փետրվար ամիսներին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 584.70 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 3.5%-ով: Փետրվար ամսվա փոխարժեքը կազմել է 586.37 դրամ՝ նախորդ ամսվա նկատմամբ արժեզրկվելով 0.6%-ով:

Պետական բյուջե: 2003 թվականի փետրվարին պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 13.6 մլրդ դրամ՝ ծրագրված 15.0 մլրդ դրամի փոխարեն, իսկ հարկային եկամուտները կազմել են 12.3 մլրդ դրամ՝ ծրագրված 14.1 մլրդ դրամի փոխարեն: Եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը հետևանք էր հարկային մուտքերի թերակատարման (-1.8 մլրդ դրամ) և ոչ հարկային ու կապիտալ եկամուտների գերակատարման (0.4 մլրդ դրամ):

ՀՀ պետբյուջեի ծախսերը կազմել են 15.3 մլրդ դրամ՝ ծրագրված 16.0 մլրդ դրամի փոխարեն: Ծախսերի նշված շեղումը պայմանավորված է եղել եկամուտների թերհավաքագրմամբ և ծրագրվածի համեմատ՝ միասնական հաշվում միջոցների ավելի պակաս կուտակմամբ:

Նշված ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 1.7 մլրդ դրամ՝ ծրագրված 1.0 մլրդ դրամի փոխարեն: Պակասուրդը ձևավորվել է պետական արժեթղթերի և արտաքին վարկերի, համապատասխանաբար՝ 0.5 մլրդ դրամ և 0.7 մլրդ դրամ զուտ մարումների, ՀՀ ԿԲ-ում Կառավարության ավանդային միջոցների մարման (4.0 մլրդ դրամ) և գանձապետական միասնական հաշվի միջոցների աճի (1.0 մլրդ դրամ) հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պահանջը ամսվա ընթացքում աճել է 2.6 մլրդ դրամով և կազմել ավելի քան 10.3 մլրդ դրամ (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները):

---

[1] *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշների աղբյուրը ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվարին» պարբերականի նախագիծն է:*

Դրամավարկային քաղաքականություն: Փետրվարին ևս, գործարար պասիվության և փողի պահանջարկի կրճատման դրսևորումների պահպանման պայմաններում, նախատեսվում էր փողի բազայի նվազում, որն, այնուամենայնիվ, իր տեմպերով զգալի զիջելու էր հունվարին դիտված նվազման տեմպերին (11.2 մլրդ դրամ): Հունվարի 31-ին բանկերի հետ ունեցած հանդիպման ընթացքում 2003 թ. առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ԿԲ կողմից արված հայտարարության մեջ շեշտադրվել են առավելապես փողի առաջարկն ընդլայնող ֆինանսական հոսքերի ակնկալիքները ու դրանց չեզոքացման նպատակով բոլոր ներքաշող դրամավարկային գործիքների կիրառման հնարավորությունները: Ընդ որում, առանձնակի ուշադրություն է հրավիրվել ԿԲ մշտական հնարավորության ավանդային գործիքի վրա:

Ինչպես և ծրագրվել էր, փետրվարին արձանագրվեցին հունվարի համեմատ փողի բազայի նվազման շատ ավելի դանդաղ տեմպեր՝ 2.3% (հունվարի 10.1%-ի փոխարեն): Դա հիմնականում պայմանավորվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագծով, որը, նախորդ ամսվա մեծածավալ նվազումից հետո, փետրվարին ավելացել է 817 մլն դրամով: Ընդ որում, ամսվա առաջին կեսին այն աճել է մոտ 5.2 մլրդ դրամով՝ Կառավարության կողմից մեծածավալ կանխիկ ծախսեր կատարելու պատճառով, իսկ երկրորդ կեսին՝ նվազել 4.4 մլրդ դրամով: Այս պայմաններում փողի բազայի նվազումն ապահովվել է թղթակցային հաշիվներում առկա ավելցուկային իրացվելիության կրճատման հաշվին՝ ներքաշող բոլոր գործիքների կիրառման շնորհիվ: Արդյունքում՝ թղթակցային հաշվի միջոցները ամսվա ընթացքում նվազել են շուրջ 3.2 մլրդ դրամով, ինչը հանգեցրել է իրացվելիության ավելցուկի մակարդակի նվազման (հունվարի վերջին օրերի 8.7 մլրդ դրամից՝ փետրվարի վերջին օրերին՝ 4.7 մլրդ դրամ): Այնուամենայնիվ, փետրվարին ևս պահպանվել է ավելցուկ իրացվելիության բավականին բարձր մակարդակ՝ միջին ամսական 3.9 մլրդ դրամ (հունվարին այդ ցուցանիշը կազմել է 6.0 մլրդ դրամ), որը, ի տարբերություն նախորդ ամիսների աճողական վարքագծի, ունեցել է բավականին կայուն մակարդակ. առաջին կեսին՝ մոտ 4.1 մլրդ, երկրորդում՝ 3.6 մլրդ դրամ:

Փողի առաջարկի ընդլայնումը փետրվարին ապահովվել է հիմնականում Կառավարության միջոցների հաշվին, մասնավորապես՝ ավելի քան 2.6 մլրդ դրամ ծախսվել է ԿԲ-ում եղած հաշիվներում կուտակված միջոցներից (այդ չափով նվազել է ԿԲ-ի հանդեպ Կառավարության զուտ պահանջի ցուցանիշը) և 3.0 մլրդ դրամ՝ Լինսի հիմնադրամի դրամաշնորհային միջոցներից:

Այս հոսքերը չեզոքացնելու համար, ինչպես և նախատեսվում էր, ԿԲ-ն կիրառել է բոլոր ներքաշող գործիքները, որոնց կազմում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել արտարժույթի վաճառքին (մոտ 5.7 մլրդ դրամ), այն դեպքում, երբ կնքվել է ընդամենը 159 մլն դրամի հակադարձ-ռեպո համաձայնագիր:

Որպես արձագանք ԿԲ հայտարարությանը, փետրվարին առևտրային բանկերը մեծ ակտիվություն են ցուցաբերել ԿԲ ավանդային մշտական հնարավորության գործիքից օգտվելու հարցում, որի արդյունքում ամսվա վերջին ԿԲ-ում ավանդադրված միջոցների մնացորդը կազմել է շուրջ 2.4 մլրդ դրամ. բավականին բարձր ցուցանիշ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (860 մլն դրամ):

Բացի ներքաշող գործիքներից, ԿԲ-ի հանդեպ բանկերի պարտավորությունները ավելի քան 3.2 մլրդ դրամով նվազեցրել է ԿԲ հաշվեկշռից համակարգային վարկի դուրսգրումը: Միևնույն ժամանակ, Վերակառուցման վարկերի բանկի (KfW) վարկային միջոցներից բանկերին տրամադրվել է 300 մլն դրամ:

Վերը նշված շարժերի արդյունքում բանկերի զուտ պարտավորությունները ԿԲ-ի հանդեպ նվազել են 4.7 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել մոտ 5.0 մլրդ դրամ:

ԿԲ զուտ այլ ակտիվները ամսվա կտրվածքով աճել են ընդամենը 603 մլն դրամով՝ չնայած ընթացքում արձանագրվել են կառուցվածքային խոշոր շարժեր: Այսպես, փետրվարի կեսերին, կանոնադրական կապիտալի համալրման նպատակով, ԿԲ-ում գտնվող արտարժույթով կուտակային հաշվին մուտքագրվել է 2.9 մլրդ դրամին համարժեք գումար, որը նվազեցրել է զուտ այլ ակտիվները, սակայն այն չեզոքացվել է ամսվա վերջին՝ համակարգային վարկի դուրսգրման ազդեցությամբ այլ ակտիվների 3.2 մլրդ դրամի աճով:

Արտարժույթով կուտակային հաշվի միջոցների ավելացման և Լինսի դրամաշնորհի հաշվին համալրվել են նաև ԿԲ ՁԱԱ-ը, որոնք չեզոքացվել են արտաքին պարտքի սպասարկման (681 մլն դրամ), շուկայում արտարժույթի զուտ վաճառքի գործառնություններով (մոտ 5.7 մլրդ դրամ) և ԿԲ հաճախորդների համար այլ փոխարկումներով (374 մլն դրամ)՝ հանգեցնելով ՁԱԱ-ի 818 մլն դրամով նվազման:

Փողի զանգվածը[2] (առանց կուտակված տոկոսների) փետրվարի վերջի դրությամբ կազմել է 184.8 մլրդ դրամ՝ աճելով ընդամենը 186 մլն դրամով: Աճն ամբողջությամբ բաժին է ընկել դրամային ագրեգատներին, որի հետևանքով դրամային զանգվածը հունվարի վերջի 107.4 մլրդ դրամից փետրվարի վերջին հասել է 107.6 մլրդ դրամի: Դրամային զանգվածի կառուցվածքային տարրերից հիմնականում աճել են շրջանառությունում գտնվող կանխիկը (543 մլն դրամով) և դրամով ցպահանջ ավանդները (390 մլն դրամով), այն դեպքում, երբ դրամով ժամկետային ավանդները նվազել են 740 մլն դրամով: Արտարժութային ավանդները պահպանել են նախորդ ամսվա վերջի մակարդակը՝ 77.6 մլրդ դրամ, սակայն դրանց կառուցվածքում ևս աճել են ցպահանջ (415 մլն դրամով) և նվազել ժամկետային (420 մլն դրամով) ավանդները:

[2] *Դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկում ներառված են 21 բանկերի տվյալներ:*

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազմարկիչը կազմել է 1.89՝ նախորդ ամսվա 1.84-ի, իսկ դրամային բազմարկիչը 1.1՝ 1.07-ի փոխարեն: Բազմարկիչների աճին նպաստող հիմնական գործոնը ավելցուկ պաշարների նվազումն էր:

Ֆինանսական շուկայում տոկոսադրույքների՝ տարեսկզբից դիտված նվազման միտումները շարունակվել են նաև փետրվարին: Մասնավորապես, իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի պարագայում ՊՊ առաջնային շուկայում պահանջարկը միջին հաշվով 3.6 անգամ գերազանցել է առաջարկված ծավալը, որի հետևանքով տեղաբաշխված արժեթղթերի միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա վերջի 14.9%-ից իջել է 12.05%-ի: Նույն տեմպերով նվազել է նաև երկրորդային շուկայում ձևավորված եկամտաբերությունը՝ նախորդ ամսվա 14.7%-ից հասնելով 12%-ի, իսկ ռեպո գործարքների տոկոսադրույքն ավելի ցածր՝ 7.3% մակարդակի (նվազել է 2.4 տոկոսային կետով): Նման միտումները աստիճանաբար խորացրել են շուկայական և ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների տարբերությունը, ինչով էլ պայմանավորված, ՀՀ ԿԲ խորհուրդը իջեցրել է ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 13.5-ից 10%-ի, լոմբարդային վարկերինը՝ 28-ից 20%-ի, ավանդներինը՝ 6-ից 5%-ի:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*Հունվար*	*2003 թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվարի նկատմամբ (%)*	*Հունվար - փետրվար*[1]	*2003 թ. հունվար - փետրվարի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*[1]
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	51852.9	110.6	111810.6	107.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	104.2	-	103.6	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)*[2]	40.6	110.9	87.6	107.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	28304.7	109.9	58344.5	107.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	589.8	95.1	1123.7	99.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	11960.9	106.0	20773.6	106.4
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	38112.4	109.8	76276.7	110.4
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	2972.7	156.2	8063.1	138.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	50225.9	92.3[2]	117800.1	100.9[2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	64599.9	101.8[2]	131343.3	106.5[2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	27732	113.3[2]	27704.0	113.7[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1403.3	-	1403.5	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.3	-	127.5	-
Գործազրկության մակարդակը (%)	9.1	-	9.1	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հունվար*	*2003 թ. հունվար 2002 թ. հունվարի նկատմամբ (%)*	*Հունվար-փետրվար*[1]	*2003 թ. հունվար-փետրվարը 2002 թ. հունվար-փետրվարի նկատմամբ (%)*[1]
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	42.2	116.1	85.5	111.1
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	87.2	136.2	168.5	127.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	45.0	162.6	83.0	149.1

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	101.9	100.3	102.5
2003 թ. հունվար - փետրվարը 2002 թ. հունվար - փետրվարի համեմատությամբ	103.4	104.2	100.6	104.3

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6		
Ապրիլ	-0.1	2.5		
Մայիս	1.6	1.7		
Հունիս	-1.3	-0.5		
Հուլիս	-2.7	-5.0		
Օգոստոս	-0.7	-3.0		
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

V. Սպառողական գների փոփոխությունները

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ[2]*
	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ[3] (%)						
Հունվար	0.5	0.4	35.5	3.7	0.1	0.0	4.1
Փետրվար	-0.4	-0.3	27.0	2.8	0.1	0.0	2.5

[1] Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:
[2] Նշված երեք ցուցանիշների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:
[3] ՀՀ ԿԲ հաշվարկներով:


ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության հաշվառմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության հաշվառմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության հաշվառմամբ[3]
	Կենտրոնական կառավարության պարտատոմսեր	Վարկային միջոցներ	Վերաֆինանսավորման վարկեր	Ընդամենը	Կենտրոնական կառավարության հաշվին ներգրավված միջոցներ	Կենտրոնական կառավարության հաշվին ներգրավված այլ միջոցներ	Ծրագրերի միջոցներ	Ծրագրերի միջոցների հաշվարկային	ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցներ	Ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0.0	13147	-9710	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0.0	14828	-12931	***-12921***
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0.0	12153	-10362	***-10366***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության հաշվառմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:


Կառավարության զուտ պարտավորությունները Կենտրոնական բանկի հաշվառմամբ



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2002			
Դեկտեմբեր	13509	13148	26657
2003			
Հունվար	13953	14828	28781
Փետրվար	16032	12153	28185



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ - 03	Փ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***123657***	***124388***	***123570***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-12384***	***-24298***	***-25787***
Կառավարություն	-9711	-12931	-10362
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	0	0	-58
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0
Բանկեր	10392	9642	4981
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360
Զուտ այլ ակտիվներ	-13065	-21009	-20406
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799
Այլ հաշիվներ	356	375	411
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***21122***	***731***	***-818***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***274***	***-11914***	***-1489***
Կառավարություն	-1816	-3220	2569
Կենտրոնական կառավարություն	-1816	-3220	2569
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	0	0	58
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0
Բանկեր	296	-750	-4661
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0
ավանդներ (-)	0	750	1610
Զուտ այլ ակտիվներ	1794	-7944	603
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***15896***	***-7141***	***-2371***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***21396***	***-11183***	***-2307***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	17973	-14332	817
Պարտադիր պահուստ. (դրամով)	3359	3130	-3160
Այլ հաշիվներ	64	19	36
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***20.6***	***0.6***	***-0.7***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2.2***	***96.2***	***6.1***
Կառավարություն	23.0	33.2	-19.9
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	0	0	1
Բանկեր	2.9	7.2	-48.3
Զուտ այլ ակտիվներ	-12.1	60.8	-2.9
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***17.2***	***-6.6***	
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***23.8***	***-10.1***	***-2.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	24.3	-15.6	1.1
Պարտադիր պահուստ. (դրամով)	21.7	16.6	-14.4
Այլ հաշիվներ	21.9	5.3	9.6

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՍ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՍ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուենցիա ոսկին= 349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03
ՁԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502
ՁՆԱ	**95940**	**94480**	**89127**
Կառավարություն	10569	10626	9140
Ձուլտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888
Տնտեսություն[2]	93993	89563	86579
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57655
Դրամով	19543	14356	14949
Արտարժույթով	43675	43211	39497
Արժեթղթեր	4130	3495	3201
Տնային տնտեսություններ	30775	23523	24377
Դրամով	7533	4261	4289
Արտարժույթով	24641	19262	20088
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77
Դրամով	64	64	64
Արտարժույթով	0	7	13
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469
Դրամով	-	3286	3077
Արտարժույթով	-	1621	1393
Ձուլտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476
Այլ ակտիվներ	30380	29789	28314
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178
Դրամական շուկայի գործիքներ	0	-	
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**
Դրամով ավանդներ	35190	32276	31931
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394

[1] Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր առմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***
Կառավարություն	963	-2305	-1222
Տնտեսություն [4,5,6]	94016	89584	86596
Չեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655
որից՝ կուտակված տոկոսներ	1041	915	908
Տնային տնտեսություններ	26242	23543	24395
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512
Հասարակական կազմակերպություններ	64	71	77
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [7]	0	4907	4469
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [5,8]	***123897***	***107407***	***107600***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [6,8]	***203138***	***185202***	***185434***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523
Ցպահանջ ավանդներ [7,8]	26036	21954	22351
կուտակված տոկոսներ	144	21	28
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ. [8]	88546	88267	87560
կուտակված տոկոսներ	406	579	618
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ [8]	79038	77572	77582
Ցպահանջ [8]	36854	34178	34593
Ժամկետային [8]	41836	43014	42594
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***
Կառավարություն		-3268	1083
Տնտեսություն		-4432	-2988
Չեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408
որից՝ կուտակված տոկոսներ		-126	-7
Տնային տնտեսություններ		-2699	852
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13
Հասարակական կազմակերպություններ		0	6
որից՝ կուտակված տոկոսներ		0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438
որից՝ կուտակված տոկոսներ		44	13
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [8]		***-16490***	***193***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [9]		***-17936***	***232***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543
Ցպահանջ ավանդներ [10]		-4082	397
կուտակված տոկոսներ		-123	7
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707
կուտակված տոկոսներ		173	39
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10
Ցպահանջ		-2676	415
Ժամկետային		1178	-420
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ		31	16

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-6.1***	***3.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-16.2***	***-8.7***
Կառավարություն		-339.4	-47.0
Տնտեսություն		-4.7	-3.3
Չեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6
Տնային տնտեսություններ		-10.3	3.6
Հասարակական կազմակերպություններ		-	-
Այլ ֆինանսական կազմակերպություններ		-	-
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [8]		-13.3	0.2
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		-8.9	0.1
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [9]		-8.8	0.1
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0
Ցպահանջ		-7.3	1.2
Ժամկետային		2.8	-1.0

[1] *Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:*

[2] *ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքով:*

[3] *ԿԲ-ի ԶԱՄ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուսգիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:*

[4] *Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:*

[5] *Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության սեկտորիզացիայի սկզբունքների:*

[6] *Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:*

[7] *Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Չեռնարկություններ և կազմ.» տողում:*

[8] *Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):*

[9] *Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*

[10] *Ընդգրկում է ռեզիդենտների դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:*

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2002	88556	25892	114448	9449	123897	78691	202588
2003							
Հունվար	74980	21933	96914	10494	107408	77194	184602
Փետրվար	75523	22323	97846	9754	107600	77188	184788


[1] *Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:*


[2] *Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:*


[3] *M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):*


[4] *M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:*


[5] *M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):*



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն դրամ
115000
112000
109000
106000
103000
100000
97000
94000
91000
07.01.03
09.01.03
13.01.03
15.01.03
17.01.03
21.01.03
23.01.03
25.01.03
29.01.03
31.01.03
04.02.03
06.02.03
10.02.03
12.02.03
14.02.03
16.02.03
18.02.03
21.02.03
24.02.03
26.02.03
28.02.03
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
15000
0
99 00
01
02
03
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
250000
200000
150000
100000
50000
0
99 00
01
02
03
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
99 00
01
02
03
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2002	2003	
	Դ	Հ	Փ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	130616	124388	123570
Առևտրային բանկերի ՁԱԱ	18286	15367	20373
Ընդամենը	148902	139755	143943
Կենտրոնական բանկի ՁԱԱ[3]	***131168***	***125064***	***124292***



[1] Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:

